Համաֆինանսավորվում է
Եվրոպական Միության կողմից
Co-funded by the European Union

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz

MEMORANDUM OF UNDERSTANDING

IN THE FIELD OF PUBLIC FINANCE MANAGEMENT BETWEEN

THE NATIONAL ASSEMBLY OF THE REPUBLIC OF ARMENIA

THE MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA

THE CHAMBER OF CONTROL OF THE REPUBLIC OF ARMENIA

THE STATE REVENUE COMMITTEE BY THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

AND

DEUTSCHE GESELLSCHAFT FÜR INTERNATIONALE ZUSAMMENARBEIT (GIZ) GMBH

within the framework of the

PROGRAMME
"PUBLIC FINANCIAL MANAGEMENT IN THE SOUTH CAUCASUS" CO-FUNDED BY THE EU DELEGATION TO ARMENIA

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ

ԵՎ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԳՄՀԸ) ՄԻՋԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ»

ծրագրի շրջանակներում

The National Assembly of the Republic of Armenia, the Ministry of Finance of the Republic of Armenia, the Chamber of Control of the Republic of Armenia, the State Revenue Committee by the Government of the Republic of Armenia and Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH (hereinafter referred to as "the Parties")

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (այսուհետ՝ Կողմեր)՝

REFERRING to the General Agreement on Technical Cooperation as of 22.12.1998 between the Government of the Republic of Armenia and the Government of the Federal Republic of Germany and the obligations and privileges laid out therein, to the Agreed Minutes of the Consultations on Development Cooperation between the Government of the Republic of Armenia and the Government of the Federal Republic of Germany, held in Yerevan 21-22 November 2016,

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ 1998 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև կնքած Տեխնիկական համագործակցության մասին ընդհանուր համաձայնագրով, ինչպես նաև այդ համաձայնագրով սահմանված իրավունքներով և պարտականություններով և ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ից 22-ը Երևանում կայացած Համագործակցության զարգացման վերաբերյալ համաժողովի համատեղ արձանագրությամբ,

NOTING the current productive relations between the parties and the mutual readiness to cooperate in the field of Public Finance Management (PFM) reforms,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ Կողմերի միջև առկա արդյունավետ հարաբերությունները և Հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումների (այսուհետ՝ ՀՖԿ) ոլորտում համագործակցելու փոխադարձ պատրաստակամությունը,

DECLARING that further development of cooperation in the field of PFM reforms will further strengthen the institutional capacities,

ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՎ, որ ՀՖԿ բարեփոխումների ոլորտում համագործակցության հետագա զարգացումները հաջորդիվ առավելագույնս կբարելավեն ինստիտուցիոնալ կարողությունները,

DESIRING to increase the overall effectiveness and efficiency of the Public Financial Management in Armenia and promote the inter-institutional cooperation between the National Assembly, the Ministry of Finance, the Chamber of Control and the State Revenue Committee,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ բարձրացնել Հանրային ֆինանսների կառավարման համընդհանուր արդյունավետությունը և օգտավետությունը Հայաստանում, ինչպես նաև խթանել միջինստիտուցիոնալ համագործակցությունը ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ վերահսկիչ պալատի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միջև,

have consented to sign this Memorandum of Understanding in the field of PFM reforms as follows:

համաձայնեցին ստորագրել սույն Փոխըմբռնման հուշագիրը ՀՖԿ բարեփոխումների ոլորտում հետևյալի մասին՝

1. The programme "Public Financial Management in the South Caucasus" (hence: the PFM Programme) is implemented by GIZ in Armenia and Georgia on behalf of the German Federal Ministry of Economic Development and Cooperation (BMZ). It was commissioned according to findings of the evaluation and

1. «Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» ծրագիրը (այսուհետ՝ ՀՖԿ Ծրագիր) իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (այսուհետ՝ ԳՄՀԸ) հայաստանյան և վրաստանյան գրասենյակների կողմից՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական

appraisal mission (19.Sep.-4.Oct.2016) of the PFM Programme for 2014-2017 and the proposal for a follow-on measure for three years from April 2017 until March 2020.

համագործակցության և զարգացման նախարարության անունից: Ծրագիրը հանձնարարվել է՝ հաշվի առնելով 2016 թվականի սեպտեմբերի 19-ից հոկտեմբերի 4-ն իրականացված 2014-2017 թվականների ՀՖԿ Ծրագրի գնահատման առաքելության արդյունքները, ինչպես նաև հաջորդ երեք՝ 2017 թվականի ապրիլ ամսից մինչև 2020 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում միջոցառումների շարունակության առաջարկը:

2. The PFM Programme will provide consultancy to the Parliaments, Governments and Supreme Audit Institutions in both countries. Its partners in Armenia are the National Assembly of the Republic of Armenia, the Ministry of Finance of the Republic of Armenia, the Chamber of Control of the Republic of Armenia and the State Revenue Committee by the Government of the Republic of Armenia.

2. ՀՖԿ Ծրագրի շրջանակներում տրամադրվելու է խորհրդատվություն երկու երկրների խորհրդարաններին, կառավարություններին և աուդիտի բարձրագույն մարմիններին: Հայաստանի Հանրապետությունում ՀՖԿ Ծրագրի գործընկերներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

3. The regional outcome objective of the PFM Programme in Armenia and in Georgia is derived from both countries' Government Programmes and other overarching strategies, and is stated as following: "Sub-systems of public finances in Armenia and Georgia approach European and international standards in the fields of result-orientation, efficiency and accountability". To achieve this inter-institutional cooperation, relevant capacities in Armenia will be further developed. Parties will expand and facilitate the exchange of knowledge, experience and (technical) expertise between representatives of the Parties and where appropriate between other relevant institutions involved in public financial management processes.

3. ՀՖԿ Ծրագրի իրականացման տարածաշրջանային նպատակը բխում է Հայաստանի և Վրաստանի կառավարությունների ծրագրերից և համընդհանուր այլ ռազմավարություններից. այն ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Հայաստանում և Վրաստանում հանրային ֆինանսների ենթահամակարգերն արդյունքահեն մոտեցման, օգտավետության և հաշվետվողականության առումով մոտենում են եվրոպական և միջազգային ստանդարտներին»: Միջինստիտուցիոնալ սույն համագործակցությունն ապահովելու նպատակով՝ Հայաստանում հաջորդիվ կզարգացվեն համապատասխան կարողությունները: Կողմերը կընդլայնեն և կհեշտացնեն գիտելիքի, փորձի և փորձառության (տեխնիկական) փոխանակումը Կողմերի ներկայացուցիչների միջև, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, հանրային ֆինանսների կառավարման գործընթացում ներգրավված այլ համապատասխան հաստատությունների միջև:

4. The parties signing hereunder declare herewith that they agree with the findings and recommendations, summarised in the attached report (Annex I). The evaluation findings and the proposal for this follow-on measure are the outcome of discussions, interviews and meetings with the representatives of partner institutions (parties of this MoU), the PFM Programme team

4. Ստորև ստորագրած Կողմերը սույնով հայտարարում են, որ նրանք համաձայն են սույն Հուշագրին կից հաշվետվությունում (Հավելված I) ներկայացված արդյունքների և առաջարկությունների հետ: Գնահատման արդյունքները և մեկնարկած միջոցառումներին հետամուտ լինելու գործողությունների առաջարկը հանդի-

of GIZ and other relevant institutions and partners during the evaluation and appraisal mission.

սանում են Գնահատման առաքելության ընթացքում գործընկեր-կառույցների (Փոխըմբռնման հուշագրի Կողմերի) ներկայացուցիչների, ԳՄՀԸ-ի ՀՖԿ Ծրագրի թիմի և այլ համապատասխան հաստատությունների և գործընկերների հետ ունեցած քննարկումների, զրույցների և հանդիպումների արդյունք:

5. The Parties agree to establish a steering body for the PFM Programme (PFM Institutional Core Group) as common floor for discussions, exchange of experience and plans, as well as general information sharing and coordination of activities if necessary between the Parties. The PFM Institutional Core Group will have at least biannual meetings to discuss the progress in PFM reforms. Other meetings between the Parties can be organised on demand and on initiative of each signatory. The PFM Programme is willing to take the role of facilitator for abovementioned meetings.

5. Կողմերը համաձայն են ստեղծելու ՀՖԿ Ծրագիրը համակարգող մարմին (ՀՖԿ առանցքային դերակատարների խումբ)՝ Կողմերի միջև քննարկումների, փորձի և պլանների փոխանակման, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ընդհանուր տեղեկատվության տարածման և գործողությունների համակարգման համար ընդհանուր հարթակ ապահովելու նպատակով: ՀՖԿ առանցքային դերակատարների խումբը հանդիպում է տարեկան առնվազն երկու անգամ՝ ՀՖԿ բարեփոխումների ոլորտում գրանցած առաջընթացը քննարկելու նպատակով: Կողմերի միջև այլ հանդիպումներ կարող են կազմակերպվել ըստ անհրաժեշտության և յուրաքանչյուր ստորագրող կողմի նախաձեռնությամբ: Վերը թվարկած հանդիպումներում ՀՖԿ Ծրագիրը պատրաստակամ է ստանձնել կազմակերպչի (ֆասիլիտատորի) դերը:

6. All Parties are responsible and willing for the overall coordination and execution of this memorandum. Drafting of action plans will be joint responsibility of the above-mentioned Parties. A results matrix summarizing proposed results indicators is shown in Annex II.

6. Բոլոր Կողմերը պատասխանատվություն են կրում և պատրաստակամություն են հայտնում սույն Հուշագրի համընդհանուր համակարգման և իրականացման համար: Կողմերը համատեղ պատասխանատվություն են կրում համապատասխան միջոցառումների ծրագրերի մշակման համար: Ակնկալվող արդյունքային ցուցանիշները ներկայացված են Հավելված II-ում:

7. The signatories declare to work jointly to achieve the goals and indicators mentioned in Annex II and related to the mandate and the jurisdiction of each party.

7. Ստորագրող կողմերն իրենց իրավասությունների ու լիազորությունների շրջանակում պատրաստակամ են համատեղ աշխատել՝ Հավելված II-ում ամրագրված արդյունքներին և ցուցանիշներին հասնելու նպատակով:

8. The Memorandum will become effective on the date of the signature by all Parties and will remain so until the end of the PFM Programme.

8. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում բոլոր Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ՀՖԿ Ծրագրի ավարտը:

9. Any disagreement concerning the interpretation and implementation of this Memorandum will be settled during consultations between the Parties.

9. Սույն Հուշագրի մեկնաբանմանը և իրականացմանը վերաբերող որևէ անհամաձայնություն պետք է լուծվի Կողմերի միջև քննարկումների արդյունքում:

SIGNED in duplicate in Armenian and English language.

ՍՏՈՐԱԳՐՎՈՒՄ է երկլեզու՝ հայերեն և անգլերեն տարբերակներով:

THE NATIONAL ASSEMBLY OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Chair, Standing Committee on Financial-Credit and Budgetary Affairs

Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ

Mr. Gagik Minasyan

Պրն. Գագիկ Մինասյան

THE MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Minister

Նախարար

Mr. Vardan Aramyan

Պրն. Վարդան Արամյան

THE CHAMBER OF CONTROL OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

Deputy Chairman

Նախագահի տեղակալ

Mr. Ara Nranyan

Պրն. Արա Նռանյան

Chief of Staff, General Secretary

Աշխատակազմի ղեկավար - գլխավոր քարտուղար

Mr. Ara Saghatelyan

Պրն. Արա Սաղաթելյան

Coordinating Expert, Budget Office

Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետ

Mr. Gagik Barseghyan

Պրն. Գագիկ Բարսեղյան

DEUTSCHE GESELLSCHAFT FÜR INTERNATIONALE ZUSAMMENARBEIT (GIZ) GMBH

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԳՄՀԸ)

Country Director

Հայաստանյան գրասենյակի տնօրեն

Mrs. Anne Kempa

Տկն. Անսե Քեմփա

"Public Financial Management in the South Caucasus" Programme Director

«Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի ղեկավար

Mr. Peter Dineiger

Պրն. Պետեր Դինայգեր

THE STATE REVENUE COMMITTEE BY THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

First Deputy Head

Նախագահի առաջին տեղակալ

Mr. Karen Brutyan

Պրն. Կարեն Բրուտյան

Annex I

Findings and Recommendations of GIZ Project Evaluation and Appraisal Mission

September 19 – October 4, 2016

1. Introduction

This memorandum provides for a briefing on the findings and recommendations of the Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH Project Evaluation and Appraisal Mission with regard to the "Public Finance Management in the South Caucasus" programme for 2014-2017 (hence: the PFM Programme). The PFM Programme is implemented by GIZ on behalf of the German Federal Ministry of Economic Development and Cooperation (BMZ).

The review mission took place in Yerevan, Armenia and Tbilisi, Georgia from September 19 till October 4th 2016 and was conducted by Dr. Ute Eckardt, Mr. Lukas Fischer and Ms. Stefanie Rauscher. The mission pursued the objective of reviewing progress and results achieved over the 2014 - 2016 time period.

The mission studied relevant documents and conducted approximately 45 individual and group interviews with key stakeholders – main implementing partners, civil society, German and international development partners. The mission appreciates very much the friendly atmosphere and the openness of discussions. Based on its findings, the mission discussed strategic options for the future support to the reform of public finance with the Armenian and Georgian partners and prepared recommendations for a follow-on commission of the PFM Programme. The next commission is running for three years from April 2017 until March 2020.

Հավելված I

ԳՄՀԸ-ի Ծրագրի Գնահատման առաքելության արդյունքները և առաջարկությունները

2016 թ. սեպտեմբերի 19-ից հոկտեմբերի 4-ը

1. Նախաբան

Սույն Հուշագիրը ներկայացնում է «Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում» 2014-2017 թվականների ծրագրի (այսուհետ՝ ՀՖԿ Ծրագիր) հետ կապված Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) Ծրագրի գնահատման առաքելության արդյունքների և առաջարկությունների ամփոփ նկարագրությունը: ՀՖԿ Ծրագիրն իրականացվում է ԳՄՀԸ-ի կողմից՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության անունից:

Ուսումնասիրությանն ուղղված առաքելությունն իրականացվել է 2016 թվականի սեպտեմբերի 19-ից հոկտեմբերի 4-ը Երևանում՝ Հայաստանի Հանրապետությունում, և Թբիլիսիում՝ Վրաստանում, դոկտոր Ութե Էքքարդի, պարոն Լուկաս Ֆիշերի և տիկին Շտեֆանի Ռաուշերի կողմից: Առաքելության նպատակն էր ուսումնասիրել 2014-ից 2016 թթ. ընկած ժամանակահատվածում գրանցած առաջընթացը և արձանագրած արդյունքները:

Առաքելությունն ուսումնասիրել է համապատասխան բոլոր փաստաթղթերը և հիմնական շահառուների հետ (հիմնական գործընկեր-կառույցներ, քաղաքացիական հասարակություն, գերմանական և միջազգային զարգացման այլ գործընկերներ) կազմակերպել է ավելի քան 45 անհատական և խմբային քննարկումներ: Առաքելությունը խորապես գնահատում է քննարկումներում տիրող բարեկամական, բաց և անմիջական մթնոլորտը: Հիմք ընդունելով գնահատման արդյունքները՝ Առաքելությունն իր հայաստանյան և վրաստանյան գործընկերների հետ քննարկել է հանրային ֆինանսների բարեփոխումների ոլորտում ապագա աջակցության ռազմավարական տարբերակները, որի արդյունքում պատրաստել է առաջարկություններ ՀՖԿ Ծրագրի շարունակության հանձնարարության վերաբերյալ: Ծրագրի հաջորդ փուլը նախատեսվում է առաջիկա երեք տարիների ընթացքում՝ 2017 թվականի ապրիլից մինչև 2020 թվականի մարտը:

2. Findings of the evaluation of the current project

Under the current PFM Programme design, GIZ is working to strengthen results-orientation in budget management, public internal financial control systems, external financial control and parliamentary oversight both in Armenia and Georgia. Taxation forms an additional area of cooperation in Georgia. Besides strengthening the capacities of the individual partner institutions (i.e. ministries of finance, parliaments and audit offices both in Armenia and Georgia), the PFM Programme also focuses on the interaction between these institutions in the budget system and fosters regional exchange across shared reform areas.

The findings of the evaluation have revealed very successful outcomes of GIZ support to Armenian and Georgian Good Financial Governance (GFG) reform processes. Notably, the PFM Programme has exceeded the initially planned activities of support to enhanced regional cooperation largely. These findings are congruent with the PFM Programme's high appreciation among partner institutions for its technical advisory services delivered by national and international consultants. The PFM Programme's role in strengthening interaction between key PFM stakeholders is recognized and well respected.

In terms of evaluation along the Organization for Economic Cooperation and Development (OECD) Development Assistance Committee (DAC) criteria the PFM Programme has been assessed as "very successful":

- The PFM Programme is assessed as being highly relevant because it is congruent with relevant national strategies, as well as in the context of European Union cooperation frameworks. It is highly relevant to raise effectiveness of the

2. Ընթացիկ ծրագրի գնահատման արդյունքները

ՀՖԿ ներկա Ծրագրի կառուցվածքի շրջանակում, ԳՄՀԸ-ն աշխատում է ամրապնդել արդյունքահեն բյուջետավորման մոտեցումը բյուջեի կառավարման համակարգում, պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգերը, արտաքին ֆինանսական հսկողությունը, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողությունը թե՛ Հայաստանում և թե՛ Վրաստանում: Հարկային բարեփոխումները հանդիսանում են Վրաստանի հետ համագործակցության լրացուցիչ ոլորտ: Ի լրումն առանձին գործընկեր-կառույցների (այսինքն՝ Հայաստանի և Վրաստանի ֆինանսների նախարարություններ, խորհրդարաններ և աուդիտի բարձրագույն մարմիններ) կարողությունների ամրապնդմանն ուղղված համագործակցությանը, ՀՖԿ Ծրագիրը միտված է նաև նպաստելու բյուջետային համակարգում այս կառույցների միջև փոխգործակցությանը և խթանելու տարածաշրջանային համագործակցությունը բարեփոխումների ընդհանուր ոլորտներում:

Գնահատման արդյունքները վկայում են Հայաստանի և Վրաստանի «Ֆինանսական խելամիտ կառավարում» բարեփոխումների գործընթացին ԳՄՀԸ-ի աջակցության հաջողված արդյունքի մասին: Ակնհայտ է, որ ՀՖԿ Ծրագիրը գերազանցել է տարածաշրջանային համագործակցության ընդլայմանն ուղղված ի սկզբանե նախատեսված գործողություններին իր կողմից ցուցաբերած աջակցությունը: Գնահատման արդյունքները համընկնում են տեղական և միջազգային խորհրդատուների կողմից մատուցվող մասնագիտական խորհրդատվական ծառայությունների ոլորտում ՀՖԿ Ծրագրի նկատմամբ գործընկեր-կառույցների կողմից արտահայտած բարձր գնահատականի հետ: Խորապես գնահատվում է ՀՖԿ Ծրագրի դերը ՀՖԿ հիմնական շահառուների միջև փոխգործակցության ամրապնդման ոլորտում:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Զարգացման աջակցության կոմիտեի (ԶԱԿ) գնահատման չափանիշների համաձայն՝ ՀՖԿ Ծրագիրը ստացել է «չափազանց հաջողված» գնահատականը հետևյալ որակումներով՝

- ՀՖԿ Ծրագիրը գնահատվել է որպես չափազանց տեղին. այն համապատասխանում է ազգային համապատասխան ռազմավարություններին, ինչպես նաև համահունչ է Եվրոպական Միության համագործակցության

implementation of the respective government policies and also in the context of BMZ policies – as regional programme for the South Caucasus policy and with the broad approach regarding the BMZ's GFG concept;

շրջանակներին: Պետական կառավարման քաղաքականությունների իրականացման արդյունավետության բարձրացումը չափազանց կարևորվում է նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) կողմից իրականացվող քաղաքականությունների համատեքստում՝ որպես Հարավային Կովկասում իրականացվող տարածաշրջանային ծրագրի քաղաքականություն, ինչպես նաև BMZ-ի «Ֆինանսական խելամիտ կառավարում» հայեցակարգի իրագործման ընդարձակ մոտեցմամբ.

- The PFM Programme was assessed to be very effective: All outcome indicators defined have been met and no negative effects have been witnessed.

- ՀՖԿ Ծրագիրը գնահատվել է չափազանց արդյունավետ. սահմանված բոլոր ելքային ցուցանիշները բավարարվել են և որևէ բացասական հետևանք չի արձանագրվել.

- Also, the PFM programme was evaluated to achieve good impact: The contribution of the PFM Programme to further long-term impacts – as an increasingly accountable and effective government – are plausible, however in detail they are not measureable. The PFM Programme contributions at least partly imply important leverage effects regarding long-term development policy goals in Armenia and Georgia by installing the necessary framework for oversight and control. Thus, the PFM Programme contributed to the creation of necessary conditions for improving results-orientation of budgeting, efficiency and accountability of the public sector. The sufficient conditions – make the mechanisms work for sector policies – are yet to be strengthened.

- ՀՖԿ Ծրագիրը գնահատվել է որպես լավ ազդեցություն թողած ծրագիր. ՀՖԿ Ծրագրի ներդրումը երկարաժամկետ կտրվածքով առավել հաշվետու և արդյունավետ կառավարման համակարգ ունենալու գործում համոզիչ է, որը սակայն ամբողջովին և ճշգրիտ չափելի չէ: Վերահսկողական և հսկողական անհրաժեշտ դաշտ ներդնելու առումով, ՀՖԿ Ծրագրի ներդրումը՝ առնվազն մասամբ, Հայաստանի և Վրաստանի զարգացման քաղաքականության երկարաժամկետ նպատակների համատեքստում ունի նշանակալի ազդեցություն: Այսպես, ՀՖԿ Ծրագիրը նպաստել է բյուջետավորման համակարգում արդյունքահեն մոտեցման, ինչպես նաև հանրային հատվածի օգտավետության և հաշվետվողականության բարելավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Այդուհանդերձ, դեռևս անհրաժեշտ է ամրապնդել քաղաքականությունների իրագործման մեխանիզմների համար անհրաժեշտ պայմանները.

- Also, the PFM Programme was evaluated to work very efficiently: Much more measures than initially planned for have been implemented with the given funds. The German International Cooperation funds have been complemented by European Union co-financing in Armenia for Chamber of Control. Coordination with other donor's contributions has been mostly excellent.

- ՀՖԿ Ծրագիրը գնահատվել է որպես չափազանց արդյունավետ գործող ծրագիր. ի սկզբանե սահմանված միջոցներով իրականացվել են նախատեսվածից ավելի շատ միջոցառումներ: Գերմանիայի միջազգային համագործակցության ֆինանսական միջոցները լրացուցիչ համալրվել են Եվրոպական Միության կողմից հատկացվող համաֆինանսավորմամբ՝ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատին աջակցելու նպատակով: Այլ դոնորների կողմից աջակցության համակարգումը եղել է հիմնականում գերազանց.

- The PFM Programme was assessed to have created a good perspective for sustainability: Many support measures are anchored in the partner system. The PFM Programme contributed to the reform of rules and procedures of the parliaments in Georgia and Armenia, supported the development of important law reforms – up to the constitutional reform in Armenia regarding the independency of the Audit Chamber. Some risks remain, depending in the short run mainly on the outcome of elections.

- ՀՖԿ Ծրագիրը գնահատվել է որպես կայուն զարգացման համար հիմքեր ստեղծող ծրագիր. օժանդակության բազմաթիվ միջոցառումներ իրականացվել են հենց գործընկեր-կառույցների համակարգերում: Այսպես՝ ՀՖԿ Ծրագիրը նպաստել է Հայաստանի և Վրաստանի խորհրդարանների կանոնակարգերի բարելավմանն ուղղված մշակումներին, օրենսդրական բարեփոխումներին, ընդհուպ Հայաստանի սահմանադրական բարեփոխումներում Հաշվեքննիչ պալատի անկախության վերաբերյալ դրույթներին: Այդուհանդերձ, կարճաժամկետ կտրվածքով դեռևս առկա են որոշ ռիսկեր, որոնք հիմնականում կապված են ընտրությունների արդյունքների հետ:

Based on those evaluation results it was recommended to continue the cooperation within the successful framework of the past. The main recommendations to further improve the cooperation targeting the joint elaboration of the relevant work processes between the partners and deepening of joint steering structures including joint monitoring mechanisms. Also, there is a room for further increase of sustainability perspectives by anchoring the support measures at the level of the partner institutions.

Հիմք ընդունելով վերը թվարկված գնահատման արդյունքները՝ առաջարկվում է շարունակել համագործակցությունն անցյալում գրանցած հաջողությունների շրջանակներում: Հիմնական առաջարկություններն ուղղված են հետագայում ևս գործընկեր-կառույցների միջև բարելավելու համագործակցությունը՝ համապատասխան աշխատանքային գործընթացների համատեղ մշակման և համակարգող կառույցների՝ ներառյալ համատեղ մոնիթորինգի մեխանիզմների, հետագա խորացման միջոցով: Բացի այդ, դեռևս անհրաժեշտ է բարձրացնել կայունությանն ուղղված աշխատանքները՝ օժանդակության միջոցառումներն իրականացնելով գործընկեր-կառույցների մակարդակով:

3. Design of the follow-on measure

3. Հետագա միջոցառումների նախագծում

The following proposals are based on the project evaluation findings, the strategic orientation given by the capacity development strategies and the priorities discussed with key stakeholders.

Ստորև ներկայացված առաջարկները հիմնված են Ծրագրի գնահատման արդյունքների, ռազմավարական ուղղվածության (հաշվի առնելով կարողությունների զարգացման ռազմավարությունները) և հիմնական շահառուների հետ առաջնային խնդիրների քննարկումների վրա:

The next PFM Programme is planned for a three-year time frame, starting in April 2017 until March 2020. The PFM Programme will essentially continue to support and consolidate the reforms that have been accompanied since 2014: It will continue to support the convergence of public finance sub-systems in Georgia and Armenia to European and international standards of results-orientation, efficiency and accountability (objective of the PFM Programme 2017-2020). Under the umbrella of regional cooperation and support to Armenian and Georgian institutions it will follow this shared objective and also cover common intervention fields.

ՀՖԿ հաջորդ ծրագիրը նախատեսված է առաջիկա երեք տարիների համար՝ 2017 թվականի ապրիլ ամսից մինչև 2020 թվականի մարտ ամիսը: ՀՖԿ Ծրագիրը կշարունակի 2014 թվականից մեկնարկած բարեփոխումներին աջակցելու և համակարգելու իր որդեգրած առաքելությունը, մասնավորապես՝ շարունակելու է աջակցել Հայաստանում և Վրաստանում հանրային ֆինանսների ենթահամակարգերի արդյունքահեն մոտեցման, օգտավետության և հաշվետվողականության առումով եվրոպական և միջազգային ստանդարտներին մոտեցմանը (ՀՖԿ Ծրագրի 2017-2020 թվականների

Those common intervention fields will cover capacity development regarding results-based budgeting, public internal financial control in budget execution, measures targeting enhanced transparency, external financial oversight leading to increased accountability, communication and support to the revenue and customs sector.

նպատակ): Տարածաշրջանային համագործակցության, ինչպես նաև Հայաստանի և Վրաստանի պետական կառույցներին աջակցություն ցուցաբերելու հովանու ներքո, Ծրագիրը հետամուտ է լինելու վերը նշված նպատակի իրականացմանը, ինչպես նաև ներգրավվելու է հարակից ոլորտներում, որը ենթադրում է կարողությունների զարգացում արդյունքահեն բյուջետավորման, բյուջեի կատարողականի նկատմամբ պետական ներքին ֆինանսական հսկողության, թափանցիկության բարելավմանն ուղղված միջոցառումների, հաշվետվողականության բարձրացմանը հանգեցնող արտաքին ֆինանսական վերահսկողության, պետական եկամուտների և տուրքերի համակարգում հաղորդակցության և աջակցության ոլորտներում:

Under these topics the specific reform support will target the specific needs discussed and agreed with the cooperation partners in both countries and also cover joint activities for regional interchange.

Վերը թվարկված ոլորտների շրջանակներում՝ բարեփոխումներին կոնկրետ աջակցությունը ենթադրում է երկու երկրների համագործակցող կողմերի հետ կոնկրետ կարիքների քննարկում և համաձայնեցում, ինչպես նաև տարածաշրջանային փոխանակմանը նպաստող համատեղ միջոցառումների իրականացում:

In Armenia the project focus has proved to be fully in line with the priorities of the core Armenian institutions involved. The support to core legal reform processes regarding the roles and responsibilities of the Chamber of Control (Audit Chamber), Parliament (National Assembly) and the Ministry of Finance has been extraordinarily successful. However, the translation of those new roles and responsibilities into practice will challenge institutions and administrations in the upcoming years. This will guide the PFM Programme support framework for the next three years.

Հայաստանում Ծրագրի ուղղվածությունն արդեն ապացուցել է, որ ամբողջովին համապատասխանում է ներգրավված հիմնական կառույցների կողմից սահմանված առաջնահերթություններին: Հատկապես հաջողված է եղել Ծրագրի աջակցությունը ՀՀ վերահսկիչ պալատի (հաշվեքննիչ պալատ), Խորհրդարանի (Ազգային ժողով) և ՀՀ ֆինանսների նախարարության դերին և պատասխանատվության շրջանակներին վերաբերող օրենսդրական բարեփոխումների հիմնական գործընթացներին: Այդուհանդերձ, առաջիկա տարիների ընթացքում պետական կառույցների և վարչակազմերի կողմից նոր դերերի և պատասխանատվությունների գործնական կիրառումը լուրջ մարտահրավեր է հանդիսանում: ՀՖԿ Ծրագիրն առաջիկա երեք տարիների ընթացքում իր աջակցության շրջանակում կներառի վերը նշված մարտահրավերի հաղթահարմանն ուղղված միջոցառումներ:

The ample works for introducing programme budgeting over the last years will be consolidated by implementing a training of trainers based implementation of human capacity development on broad base.

Ծրագրային բյուջետավորման ներդրմանն ուղղված վերջին տարիների լայնածավալ աշխատանքները կհամախմբվեն՝ իրականացնելով վերապատրաստողների ուսուցում, որն ընդհանուր առմամբ ուղղված կլինի մարդկային կապիտալի կարողությունների զարգացմանը:

The PFM Programme supports to the general implementation of PIFC concept and principles

ՀՖԿ Ծրագիրն աջակցում է Պետական ներքին ֆինանսական հսկողության հայեցակարգի (ՊՆՖՀ

which include both IA and FMC systems, and these both are supplementing each other. The Government will be supported in further introduction of PIFC reforms through PFM Programme further support to the IA in the area of quality control and through introduction of FMC system.

հայեցակարգ) և սկզբունքների ընդհանուր կիրառմանը, որը ներառում է և՛ ներքին աուդիտի, և՛ ֆինանսական կառավարման և հսկողության (ՖԿՀ) համակարգերը՝ լրացնելով միմյանց: ՀՀ կառավարությանը օժանդակություն կցուցաբերվի ՊՆՖՀ բարեփոխումների հետագա իրականացման համար՝ որակի վերահսկողության ոլորտում ներքին աուդիտին և ՖԿՀ համակարգի ներդրմանն ուղղված ՀՖԿ Ծրագրի հետագա աջակցության միջոցով:

The Audit Chamber and the Standing Committee on Financial-Credit and Budgetary Affairs of the National Assembly of the Republic of Armenia will be supported in their adaptation to the new roles after constitutional reform.

Հաշվեքննիչ պալատին և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին աջակցություն կցուցաբերվի սահմանադրական բարեփոխումներից հետո իրենց նոր դերերը ստանձնելու ուղղությամբ:

The new area of capacity development in the revenue system will start with developing a strategic plan for the State Revenue Committee (SRC) and further specific support to the tax administration, particularly based on the findings of the Tax Administration Diagnostic Assessment Tool (TADAT). Further support measures are possible under this framework. The German International Development Cooperation funds will be accompanied in Armenia by a co-financing arrangement of the European Union (EU).

Պետական եկամուտների համակարգում կարողությունների զարգացման նոր փուլը կմեկնարկի Պետական եկամուտների կոմիտեի համար ռազմավարական ծրագրի մշակմամբ, որին կհետևի կոնկրետ աջակցությունը հարկային վարչարարությանը, մասնավորապես՝ հաշվի կառնվեն Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի (TADAT) արդյունքները: Սույն ոլորտում հնարավոր է ցուցաբերվի նաև այլ աջակցություն: Գերմանիայի միջազգային զարգացման համագործակցության կողմից ֆինանսավորումը Հայաստանում կզուգորդվի Եվրոպական Միության կողմից հատկացվող համաֆինանսավորման հետ:

The support framework will provide some flexibility to adapt to changing conditions throughout the development of the reform processes over the coming three years.

Առաջիկա երեք տարիների ընթացքում աջակցության շրջանակը կլինի ճկուն՝ բարեփոխումների գործընթացների զարգացման ընթացքում պայմանների փոփոխություններին արձագանքելու համար:

Under all topical intervention areas, regional cooperation is planned for in different regional exchange formats, as for example the interchange of the budget committees and the parliamentary budget offices, possible joint activities of the supreme audit institutions (SAI). Issues of reform communication of the different institutions will form an additional element of regional exchange, possibly addressing involvement of media and civil society organizations (CSO).

Վերը թվարկված բոլոր հարակից ոլորտներում տարածաշրջանային համագործակցությունը նախատեսված է իրականացնել տարածաշրջանային փոխանակման տարբեր ձևաչափերով, օրինակ՝ բյուջետային հանձնաժողովների և խորհրդարանի բյուջետային գրասենյակների փոխգործակցություն, աուդիտի բարձրագույն մարմինների հնարավոր համատեղ աշխատանքներ: Տարբեր կառույցների հաղորդակցության բարեփոխումներին վերաբերող հարցերը կձևավորեն տարածաշրջանային փոխանակման մի նոր լրացուցիչ տարր, որի արդյունքում հնարավոր է քննարկվի լրատվական միջոցների և քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը:

Annex II

Results Matrix

Module Objective (Outcome)

Subsystems of public finances in Armenia and Georgia approach European and international standards in the fields of result orientation, efficiency and accountability.

Outcome Indicators for Armenia:

Outcome Indicator 1

The Draft Law on Annual Budget 2020 in Armenia in programme classification is discussed in the National Assembly of the Republic of Armenia.

Outcome Indicator 2

In the assessment dimensions of the Supreme Audit Institutions Performance Measurement Framework (SAI PMF) with regard to financial, compliance and performance audit results, the follow-up on implementation of the recommendations by the Control Chamber of the Republic of Armenia has improved within the frameworks of implementation of Indicator C1.

Outcome Indicator 5 (from the regional measures)

Three documents developed jointly by Armenian and Georgian partner institutions and setting out recommendations for areas of reform in the fields of activity of results-oriented budget management, modern internal control systems (public internal financial control, PIFC), transparency and accountability or revenue, which contain the results from the regional exchange of experience, are available.

Հավելված II

Արդյունքների մատրից

Ծրագրի հիմնական նպատակը (վերջնական արդյունքը)

Հայաստանում և Վրաստանում հանրային ֆինանսների ենթահամակարգերն արդյունքահեն մոտեցման, օգտավետության և հաշվետվողականության առումով մոտենում են եվրոպական և միջազգային ստանդարտներին:

Արդյունքի ցուցանիշները Հայաստանի համար

Վերջնական արդյունքի ցուցանիշ 1

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի ծրագրային ձևաչափով նախագիծը քննարկվում է ՀՀ Ազգային ժողովում:

Վերջնական արդյունքի ցուցանիշ 2

Աուդիտի բարձրագույն ինստիտուտների *Կատարողականի գնահատման ստանդարտով* ֆինանսական, համապատասխանության և կատարողականի հաշվեքննությունների վերաբերյալ սահմանվող գնահատման չափորոշիչների համաձայն ՀՀ վերահսկիչ (հաշվեքննիչ) պալատի կողմից ներկայացված առաջարկությունների կատարումը բնութագրող ցուցանշի բարելավում՝ Գ1 ցուցանիշի կատարման շրջանակում:

Վերջնական արդյունքի ցուցանիշ 5 (տարածաշրջանային միջոցառումների վերբերյալ)

Հայաստանի և Վրաստանի գործընկեր-կառույցների կողմից համատեղ մշակված երեք փաստաթղթերը և դրանցով ներկայացվող առաջարկություններն արդյունքահեն բյուջեի կառավարման, ներքին հսկողության ժամանակակից համակարգերի (պետական ներքին ֆինանսական հսկողություն, ՊՆՖՀ), թափանցիկության և հաշվետվողականության կամ պետական եկամուտների ոլորտներում բարեփոխումների վերաբերյալ, ներառյալ նաև փորձի տարածաշրջանային փոխանակման արդյունքները, հասանելի են:

Output A: Capacities for implementation of results-oriented budgeting are strengthened

Indicator A.1: A training programme (training materials regarding issues such as gender-responsive budgeting, trained local trainers, training plans, clarification of responsibilities) for budget and specialist departments in line ministries, the Control Chamber and the National Assembly on how to apply the new programme budgeting methodology in Armenia is developed.

Միջանկյալ արդյունք Ա. Արդյունքահեն բյուջետավորման ներդրման համար անհրաժեշտ կարողությունները հզորացվել են

Ցուցանիշ Ա.1. Ճյուղային նախարարությունների ֆինանսական և ոլորտային վարչությունների, ՀՀ վերահսկիչ պալատի, ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչների համար ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության կիրառման գծով վերապատրաստման ծրագիրը մշակված է (ներառյալ վերապատրաստման նյութերը գենդերային բյուջետավորման թեմայով, ինչպես նաև տեղացի վերապատրաստողների կարողությունների բարելավման գծով վերապատրաստման ծրագրերը և ժամանակացույցը, պատասխանատուների և նրանց պարտականությունների հստակեցումը):

Output B: Processes for modern internal control systems are implemented

Indicator B.1: Provision from draft legislation on Financial Management and Control (FMC) is piloted in 2 ministries.

Միջանկյալ արդյունք Բ. Ներքին հսկողության ժամանակակից համակարգերի ներդրման գործընթացներն իրականացվել են:

Ցուցանիշ Բ.1. Ֆինանսական կառավարման և հսկողության մասին ՀՀ օրենքի նախագծի դրույթները փորձարկվում են երկու նախարարություններում:

Output C: Preconditions for transparency and accountability are improved

Indicator C.1: The Audit Chamber introduces an internal follow-up system on its recommendations regarding financial, compliance and performance audits.

Indicator C.2: X of Y measures defined in the Human Capacity Development Strategy for the parliamentary Budget Office in Armenia are implemented.

Միջանկյալ արդյունք Գ. Թափանցիկության և հաշվետվողականության նախապայմանները բարելավվել են:

Ցուցանիշ Գ.1. Վերահսկիչ (հաշվեքննիչ) պալատը ներդնում է ֆինանսական, համապատասխանության և կատարողականի աուդիտների վերաբերյալ իր առաջարկությունների կատարման ներքին հսկողական համակարգ:

Ցուցանիշ Գ.2. ՀՀ Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի համար Մարդկային կարողությունների զարգացման ռազմավարության մեջ սահմանված Y միջոցառումներից X-ը իրականացվում են:

Output D: Preconditions for resource mobilization are improved

Indicator D.1: A strategic plan for Armenia's State Revenue Committee (SRC) is adopted, based on the results of the Tax Administration Diagnostic Assessment Tool (TADAT) assessment.

Միջանկյալ արդյունք Դ. Ռեսուրսների հավաքագրման համար սահմանված նախապայմանները բարելավվել են:

Ցուցանիշ Դ.1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ռազմավարական ծրագիրն ընդունված է՝ հիմք ընդունելով Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի (TADAT) արդյունքները:

Output E: Regional cooperation in the South Caucasus is strengthened

Indicator E.1: Partner institutions from Armenia and Georgia have implemented four joint learning formats on:

- results oriented budgeting;
- modern internal control mechanisms (PIFC);
- transparency and accountability,
- revenue systems

(e.g. joint audits, quality assurance in internal audits, etc.).

Indicator E.2: The external communication units of the Armenian and Georgian

- Parliaments,
- Ministries of Finance, and
- Supreme Audit Institutions

have implemented each one regional event to exchange on roles of CSO and media in good financial governance.

Միջանկյալ արդյունք Ե. Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցությունն ամրապնդվել է

Ցուցանիշ Ե.1. Հայաստանի և Վրաստանի գործընկեր-կառույցներն իրականացրել են ուսուցողական ձևաչափով չորս միջոցառում հետևյալ թեմաներով.

- արդյունքահեն բյուջետավորում,
- ներքին հսկողության ժամանակակից մեխանիզմներ (ՊՆՖՀ),
- թափանցիկություն և հաշվետվողականություն,
- պետական եկամուտների համակարգեր:

(օրինակ՝ համատեղ աուդիտներ, ներքին աուդիտի որակի երաշխավորում, և այլն):

Ցուցանիշ Ե.2. Հայաստանի և Վրաստանի

- Խորհրդարանների,
- Ֆինանսների նախարարությունների, և
- Աուդիտի բարձրագույն մարմինների

հասարակության հետ կապերի (արտաքին հաղորդակցության համար պատասխանատու) ստորաբաժանումներից յուրաքանչյուրը կազմակերպել է առնվազն մեկ տարածաշրջանային միջոցառում՝ ուղղված ֆինանսական խելամիտ կառավարման համակարգում քաղաքացիական հասարակության կառույցների և լրատվամիջոցների դերերի վերաբերյալ փորձի և գիտելիքի փոխանակմանը: